ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-5

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-5

YEREVAN
IAE PUBLICATION 2023

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ – 5

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն Մարության, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Նվարդ Վարդանյան* (պատասխանատու խմբագիր), *Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina, Nvard Vardanyan* (Managing editor)

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 5-րդ հատորն ընդգրկում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի պատմության թանգարանի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և այլ հիմնարկների հետազոտողների գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են հնագիտության, ազգագրության, մշակութային մարդաբանության և բանագիտության՝ մինչ օրս չլուսաբանված զանազան հիմնախնդիրների քննությանը: Որոշ հոդվածներ ունեն միջգիտակարգային բնույթ և շոշափում են նաև լեզվաբանական, արվեստաբանական հարցադրումներ: Համարն ընդգրկում է նաև գիտական հաղորդումներ և հոբելյանական հոդված:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՒ ԳՏԱԾՈՆԵՐ 7

Բենիկ Վարդանյան
Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կեռերը 8

Հենրիկ Դանիելյան
«Կիկլոպյան» ամրոցների ֆենոմենը՝
Արագածի հարավային լանջերի ամրոցների օրինակով 26

Լևոն Մկրտչյան
Արարատյան դաշտի հյուսիսում գտնվող աշտարակատիպ կառույցները 37

Արմինե Գաբրիելյան
Արցախի Տիգրանակերտի անտիկ դրոշմազարդ խեցեղենը 45

Ռուզան Փալանջյան
Անտիկ ժամանակաշրջանի գինեգործությանն առնչվող
հնագիտական գտածոներ Վայոց ձորից 57

Դիանա Միրիջանյան
Հայաստանի միջնադարյան քարե տապանները 66

Արսեն Հարությունյան
Տաթևի մեծ անապատի վիմագրական ժառանգությունը 76

II. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 95

Նվարդ Վարդանյան
Ավելը (ցախավելը) ծիսահավատալիքային համատեքստում.
ավանդույթի հարատևումը մեր օրերում 96

Սմբատ Հակոբյան
Մահը հայկական ֆեյսբուքում.
ավանդական, մոդեռն, թե պոստմոդեռն սուգ 109

III. ՊԱՐ ԵՒ ԾԵՍ 123

Նարինե Շամամյան
Պարերը Վայոց ձորի հարսանեկան արարողություններում
(ավանդույթ և արդիականություն) 124

Հայարփի Մնանյան
Իրանահայերի չուբբազի (փայտախաղ) և դաստմալբազի
(թաշկինակներով պար) պարերը ծիսական և կենցաղային միջավայրում 137

IV. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹ 149

Սամվել Ռամազյան
Քաչալ Համզա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում 150

Հասմիկ Մարիկյան
Օրորոցի լեզվամշակութային դրսևորումները հայ իրականության մեջ (անգլալեզու նյութի համադրմամբ) 172

Լուսինե Անգելուշ
Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը և միջմշակութային հաղորդակցումը 182

V. ՊՈԼՍԱՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 195

Սալվինե Մարկոսյան
Ներհակությունները պոլսահայ համայնքում. արևմտահայերի ազգային սահմանադրության հաստատման շուրջ (1856–1863 թթ.) 196

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ 207

Մարիամ Մարիբեկյան
Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունից 208

Յարութիւն Խաչատուրեան
Խաչքարերի ուսումնասիրության մեթոդաբանական ակնարկ 214

VII. ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ 225

Արման Մալոյան
Հակոբ Չոլաքյան - 75 226

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 233

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 276

VI

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

DOI:10.54503/2953-805X-2023.5-214

Յարութիւն Խաչատուրեան
Փարիզ

ԽԱՉՔԱՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Խաչքարերի մասին բազմաթիվ հրապարակումներ են եղել, որոնք, սակայն, բավարար չեն խաչքարային արվեստի մասին ամբողջական պատկեր ստանալու համար. պակաս է հիմնականը՝ ճշգրիտ խաչքարացուցակը: Գիտենք, որ յուրաքանչյուր խաչքարի ուրույն «գոյանշումը (identification)» հեշտ չէ, հետևաբար այս արվեստին վերաբերող դասակարգման համակարգը, ձևայնացումը (formalisation) և եզրաբանությունը անբավարար են: Այս հարցերը կարևոր են թե՛ ժառանգության կառավարման, թե՛ գիտության և թե՛ զբոսաշրջության քաղաքականության համար, մանավանդ որ խաչքարի արվեստը ներառվել է ՅՈՒՆԵՍԿՈ-ի ցանկում:

Այս հոդվածում անդրադառնում ենք մեթոդաբանական հարցերի՝ նկատի ունենալով քանակական տրամաբանությունը, դաշտային լիակատար հավաք «կրկնվող» (*iterative*) եղանակով, և գրասենյակային ձևայնացման աշխատանք, որպեսզի կարելի լինի յուրաքանչյուր խաչքարը եզակիորեն գոյանշել: Այս բոլորը մեզ հնարավորություն է տալիս լավագույնս նկարագրելու ուսումնասիրվող առարկան՝ խաչքարը: Խաչքարացուցակը իրականացնելու կարևոր հարցերից է նաև տեղեկատվական գործիքների կիրառումը, ինչպիսիք են տվյալների շտեմարանն ու աշխարհագրական տեղեկատվական համակարգը (ԱՏՀ):

Հիմնաբառեր՝ խաչքար, ցուցակ, ԱՏՀ, անձնագիր, որակ:

Խնդրի դրվածքն ու աղբյուրագիտությունը

Միջնադարյան հնագիտության խաչքարերի ուսումնասիրության ոլորտում կարևոր ներդրում են ունեցել երեք հետազոտողներ: Հիշատակենք Ա.Ն.Շահինյանի[1] և Հ.Լ.Պետրոսյանի[2] ուսումնասիրությունները, որոնք *որակական տրամաբանության* նրբին և համակարգված, սակայն ոչ ձևայնացված վերլուծություններ են մեզ առաջարկում: Դրանք դասակարգման սկզբնավորման առաջին փորձերն են արել: Վերոհիշյալներից առաջին հեղինակը ուսումնասիրում է խաչքարերի ակունքները, ինչպես նաև դրանց երկու շրջանները՝ 9–10-րդ դդ. և 11–12-րդ դդ., ապա հանգում է մի տիպաբանության, որը հիմնված է տարատեսակ՝ երբեմն ձևակազմական, երբեմն էլ տարածական չափանիշների վրա: Պետրոսյանը մոտավոր կերպով հետևում է Շահինյանի «ժամանակագրական» տիպաբանությանը (այսինքն, 9–10-րդ դդ., 11-րդ դ., 12–14-րդ դդ., 15–17-րդ դդ.՝ առանձնացնելով Հին Ջուղայի դպրոցը)՝ կարևոր տեղեկություններ հաղորդելով խաչքարերի ծագման և զարգացման, ինչպես նաև զարդա-

[1] Շահինյան 1984:

[2] Պետրոսյան 2008:

քանդակների և խորհրդաբանական իմաստի մասին: Բոլոր այս աշխատությունները ձևայնացման առումով մոտավոր բնույթ են կրում և այնքան ներկայացուցչական չեն, եթե հաշվի առնենք գոյություն ունեցող և չուսումնասիրված խաչքարերի քանակը: Խաչքարերին վերաբերող այս աշխատություններին զուգահեռ հիշենք նաև Ս. Գ. Բարխուդարյանին[3], որն առաջինն էր, որ սկսեց խաչքարերի և այլ հուշարձանների արձանագրությունների *քանակական տրամաբանությամբ* ուսումնասիրություն կատարել՝ անդրադառնալով հատկապես քարագործ վարպետներին, հիշատակելով գործածվող տարատեսակ եզրույթները, որոնք նա գտել էր Խորհրդային Հայաստանի տարածքում:

Խաչքարերի մասին կան նաև այլ հրատարակություններ, սակայն մեզ թվում է, որ եղած տվյալները բավարար չեն ո՛չ որակական, ո՛չ էլ քանակական առումով: Գիտակից ենք, որ յուրաքանչյուր խաչքարի ուրույն «գոյանշումը (նույնականացումը/identification)» հեշտ չէ, հետևաբար նրանց ամբողջական բարձր որակի ցուցակ ստանալը դժվար է: Այնուամենայնիվ, կարող ենք համարել, որ նախորդ աշխատություններում հաշվի չի առնվել մեթոդաբանական տեսանկյունը, և դրանց նպատակակետը սահմանափակվել է հնագիտական ուսումնասիրությամբ կամ արվեստի պատմությամբ: Այսօր պետք է ավելի հեռուն տեսնենք և հաշվի առնենք քանակական կողմն ու տվյալների գիտությունը:

Հոդվածում կներկայացվեն մեթոդաբանական տեսանկյունները, որոնց վրա հիմնված պետք է լինի ցանկացած խաչքարացուցակի մշակման աշխատանք՝ հաշվի առնելով օգտագործման երեք հիմնական ոլորտ՝ հնագիտություն և արվեստի պատմություն, ժառանգության կառավարում և զբոսաշրջություն: Այս մտորումները արդյունք են մեր հրատարակած գրքում[4] կատարված հետազոտական աշխատանքների և ՀՀ մարզերում իրականացված գիտարշավների (2006-ից Գեղարքունիքում, 2017-ից՝ Վայոց ձորում և 2018-ից՝ Կոտայքում): Մեթոդաբանական խնդիրների միջոցով տարբեր օրինակներ պիտի ցույց տանք, որոնք վերցված են Վայոց ձորի մարզից: Այս օրինակները արդյունք են 2017 թ. հոկտեմբերին և 2018 թ. սեպտեմբերին իրականացված երկու մեկշաբաթյա արշավների[5]. Վայոց ձորի 15 բնակավայրերում հաշվառել ենք 553 խաչքար:

Հիմնական մաս

Մեթոդաբանությունը գիտելիքների բնագավառում կիրառվող տարբեր մեթոդների համակարգված և տեսական վերլուծությունն է: Այլ կերպ ասած, դա ընդհանուր հետազոտական ռազմավարության հարց է, մասնավորապես՝ սահմանելու տարբեր մեթոդներ, գործիքներ, դերակատարներ, եզրաբանություն, տվյալներ, հաշվառման և վերլուծության գործընթաց, մոտեցումներ, որոնցով կիրականացվի հետազոտական նախագիծը: Այս հոդվածում կքննարկվեն

[3] Բարխուդարյան 1963:

[4] Khatchadourian, Basmadjian 2014:

[5] Արշավախումբը՝ Շանթալ և Ժան-Կլոդ Հոթելյեր (Ֆրանսիա), Ռաֆֆի Քորթոշյան (Երևան) և սույն հոդվածի հեղինակը:

միայն հետևյալ կետերը. ուսումնասիրության թեման, մոտեցումները, գործիքները, ձևայնացումը (formalisation), տվյալների որակը և հաշվառումը:

Ուսումնասիրության առարկայի սահմանում

Ֆ. Ջինջյանը իր հնագիտության տեսության և մեթոդների աշխատության[6] մեջ հետևյալ ձևով է արտահայտվում. «*Ընթերցողը, անկասկած, կզարմանա, որ հնագիտական առարկայի բնորոշումը այստեղ քննարկվում է […]. Առարկայի գոյանշման և ճանաչողության երկու հարցերը չեն տարբերաժանվում. գոյանշումը ճանաչողություն է*»: Առարկայի բնորոշումը էական լինելով, այն մեր աշխատանքի սկզբնակետն եղավ, երբ ուսումնասիրում էինք Սպահանի և Երուսաղեմի խաչքարերը: Այդ ժամանակից ի վեր սույն սահմանումը զարգացել է՝ հաշվի առնելով ՀՀ խաչքարերի ոլորտի իրականությունը: Մենք հեռացրել ենք որոշ խաչաքանդակներ, և նոր սահմանումը դարձել է հետևյալը.

Հորինվածք, երբեմն օծված, հաճախ օրհնված, որը քանդակված է քարի վրա հարթաքանդակի տեսքով, կազմված է խաչից, զարդաքանդակներից և սովորաբար արձանագրությունից,որը պարունակում է սուրբ խաչ կամ սուրբ նշան բառերը:

Չենք ներառում հետևյալ խաչերը՝

- պատերի, անտաշ [գերեզմանա]քարերի կամ ժայռերի վրայի պարզ խաչերը (այսինքն՝ թելանման փորագրված խաչի իրանները [նկ. 1]):
- տապանաքարերի կամ պատվանդանների վրայի խաչազարդաքանդակները [նկ. 2]:

Ավելի ուշ կտեսնենք, թե արդյոք այս սահմանումը բավարար է:

Հնարավոր մոտեցումներ

Ինչ էլ որ լինեն ընտրված նպատակները (հնագիտություն կամ ժառանգության կառավարում), անկասկած, լիակատար խաչքարացուցակի ստեղծումը նախապայման է: Հետևաբար, կարևոր է ընտրել ճիշտ մոտեցում այս նպատակին հասնելու համար: Մենք հավատում ենք, որ տարբեր գործունեություններ իրականացնելու համար ամենահարմարը «նախագծային» (*project*) եղանակն է: Չնայած որ մասամբ կազմված և հրապարակված խաչքարացուցակ[7] գոյություն ունի, այնուամենայնիվ ավելի կառուցված ցուցակ ստեղծելու համար չորս նախագծային մոտեցում կարելի է որդեգրել՝ կանխատեսող (*predictive*), աստիճանական (*incremental*), կրկնվող (*iterative*) և ճկուն (*agile*):

Կանխատեսող ձևը հիմնված է բոլոր աշխատանքները սկզբից պլանավորելուց: Այս ձևը ունի անհարմարություն, քանի որ խաչքարերի ընդհանուր քանակը և վայրերը անհայտ են:

Աստիճանական ձևը հիմնվում է աճման միավորի պլանավորման վրա՝ առաջինից մինչև վերջին: Աճման միավորը կարող է լինել, օրինակ, բնակավայ-

6 Djindjian 2017, 3, 1.1 «*Le lecteur sera sans doute surpris que la définition de l'objet archéologique fasse ici débat […] les deux questions de l'identification et de la connaissance d'un objet ne sont pas dissociées : l'identification est connaissance*».

7 ՀՊՄ հուշարձանների ցանկ 2002–2005:

ը (գյուղը): Հետևաբար ցուցակը կկազմվի բնակավայր առ բնակավայր: Յուրաքանչյուր բնակավայրի ցուցակը ամբողջությամբ կմշակվի մյուսին անցնելուց առաջ: Այստեղ բնակավայրերի միջանկյալ տարածքները և ամեն մի բնակավայրի խաչքարերի թիվը չիմանալը ամենամեծ անպատեհությունն են:

Կրկնվող ձևը պարուրաձև մոտեցում է. պարբերական վերանայում և նախորդ փուլերի աշխատանքների սրբագրում: Այն մեզ թույլ է տալիս ցանկացած պահի վերադառնալ նույն վայրեր՝այդպիսով անընդհատ փոփոխելով ցուցակը, նույնիսկ արդեն մշակված տեղանքներում:

Ճկուն ձևը աստիճանական և կրկնվող ձևերի համադրությունն է: Սա թերևս ամենահարմար մոտեցումն է, քանի որ խաչքարերը փոքր, շարժական մշակութային առարկաներ են, որոնք հեշտությամբ հայտնվում կամ անհետանում են: Բացի այդ, այս մոտեցումը թույլ է տալիս վերանայել նախագծի ընթացքում եղած բոլոր մեթոդաբանական մտորումները: SCRUM[8] ճկուն ձևը, թերևս, ամենահեշտ աշխատելակերպն է. փոքր խմբակ, պարզ գործընթաց և շարունակական արդյունքներ:

Գործիքները

Գործիքների հարցը էական է: Այստեղ հնագիտության մեխանիկական գործիքների (թիակ, մաղ…), կամ չափելու գործիքների մասին չէ խոսքը: Ցուցակը իրականության պատկերումը պետք է լինի: Այսօր այս պատկերումը իրականացվում է տեղեկատվական համակարգերի միջոցով: Ըստ մեր պահանջների պետք է ընտրել հետևյալ գործիքներից ամենահարմարը:

- Հավաքման գործիքներ՝ *collector for ArcGIS, Qfield for QGIS, Arches Collector…* Սրանք հավելվածներ են բջջային հեռախոսների կամ պլանշետների վրա: Վերոհիշյալները կարևոր են, քանի որ նրանք կարող են արագացնել հավաքման գործընթացը և խուսափել սխալներից:
- Տվյալների շտեմարանի կառավարման համակարգեր՝ *MySQL, PostgreSQL…* Դրանք անհրաժեշտ են մեծ քանակությամբ փոխկապակցված տվյալների կառավարման համար:
- Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր (ԱՏՀ) : *ArcGiS, QGIS…* Դրանք օգտակար են խաչքարերը աշխարհագրական հարթության վրա պատկերացնելու և կատարելու տարածական վերլուծություններ: Տե՛ս Վայոց ձորի խաչքարերի մասնակի հավաքածուն [նկ. 3; 4]:
- Մաթեմատիկական վերլուծության գործիքներ: Խաչքարերի ուսումնասիրությունը առնչվում է մեծաքանակ տվյալների: Քանակական վիճակագրական մոտեցումը տալիս է պարզաբանումներ, որոնք որակական մոտեցումներ չեն կարող տալ: Օրինակ՝ Կոտայքում և

[8] Schwaber, Sutherland 2017.

Վայոց ձորում թվագրված խաչքարերի՝ թեկուզ փոքր քանակը (համապատասխանաբար 96 և 29), մենք նկատում ենք մի միտում. խաչքարերի լայնությունը նվազում է չորս հարյուր տարվա ընթացքում [նկ. 5; 6]: Հստակ է, որ անհրաժեշտ կլինի ուսումնասիրել այս խնդիրը խաչքարերի ավելի մեծ քանակով՝ երկու մարզերի ընդլայնված վերլուծության ընթացքում:

- Բովանդակության հրատարակման հարթակներ՝ *Facebook*, *Wikipedia*…
- Մշակութային ժառանգության կառավարման այնպիսի հարթակ, ինչպիսին է *Arches Heritage Inventory and Management System*[9] գույքագրման և կառավարման համակարգը, բնականաբար ներառում է չափորոշիչներ և կառուցվածքներ մշակութային առարկայի թեքումով:

Գործիքների յուրաքանչյուր ընտանիքի համար կա համակարգերի երեք հիմնական տեսակ՝ շուկայական (վճարովի), անվճար (*Open source*) կամ առանձնահատուկ (ըստ պահանջի): Դա ընտրություն է, որը մենք պետք է կատարենք, բայց ո՞ր չափանիշներով. ահա դրանցից մի քանիսը: Ո՞վ (անհատ, ինստիտուտ, կառավարություն և այլն) կդառնա ցուցակի օգտագործողը և կառավարողը, ինչպե՞ս է կառավարվում գաղտնիությունը (*confidentiality*), ամբողջականությունը (*Integrity*) և առկայությունը (*availability*), ինչպե՞ս ապահովել այս ցուցակի կայունությունը ժամանակի ընթացքում: Սրանք էական հարցեր են:

Ձևայնացում

Ձևայնացումը (*formalisation*) նշանակում է պարզ և ճշգրիտ կերպով նկարագրել տեղեկատվությունը գիտական ոլորտում, գործող կանոնների համաձայն կամ մեր ուսումնասիրած առարկայի հետ կապված: Մեջբերենք Ֆ. Ջինջյանի խոսքը. «*Հնագիտական փվյալները նկարագրվում են տեղեկատվությունը որակավորող բառապաշարով և թույլատրվում է այն քանակավորել: Այս բառապաշարի բառերը ունեն ճշգրիտ, եզակի և միակ իմաստ: Այս բառերի ընտրությունը և նրանց փոխհարաբերությունները հանգեցնում են եզրույթացանկերի (lexicon) կամ եզրույթացուցակների (thesaurus) […] կամ օնտոլոգիայի (ontology)*[10] […] *ձևավորմանը, նշելով հոմանիշները, ստորակարգությունները (Hierarchy) և բառերի օգտագործման կանոնները: Հնագիտական խոսքը միշտ պետք է զուգորդված լինի հավելվածում տրված օնտոլոգիայի հետ*»[11]: Ջինջյանը

[9] Arches.

[10] Համակարգչային և տեղեկատվական գիտություններում ընտրանին (օնտոլոգիան - ontology) եզրույթների և հասկացությունների կառուցվածքային բազմություն է, որը ներկայացնում է տեղեկատվության մի ոլորտի իմաստը (տես ՀՊՄ հուշարձանների ցանկ 2002–2005):

[11] Djindjian 2017, 1, 5.1 «*Les données archéologique sont décrites par un vocabulaire qualifiant l'information et permettant de la quantifier. Ces mots du vocabulaire possèdent un sens précis, unique et non ambigu. Le choix de ces mots et leurs relations mutuelles conduisent à élaborer des lexiques ou thésaurus […] ou des ontologies […] précisant les synonymies, les hiérarchies et les règles d'util-*

մի ուրիշ տեղ պարզաբանում է. «*Ընդհանրապես, նկարագրության հարցը լուծում չունի. չկա առարկայի մի նկարագրություն, այլ առարկայի նկարագրություններ, նույնքան ներհայտուկ տեղեկատվություն*»[12]:

Որոնք են խաչքարերի պատշաճ տեղեկատվությունները: Անհրաժեշտ են հետևյալ տվյալները՝

ա. Առարկան՝ չափերը, չափերի բնույթը, արտաքին վիճակը, փորագրված մակերեսի վիճակը (քանդակների, արձանագրության), դիրքը, նյութը, ձևը, տիպը, նպատակը, առիթը, զարդաքանդակները, արձանագրությունը, թվականը:

բ. Միջավայրը՝ կոորդինատները, կողմնորոշումը, տեղակայումը, տեղը, շենքը/տարածքը, հնավայրը, բնակավայրը, մարզը, տեղին/ոչ տեղին լինելը, հատակագիծը:

գ. Հղումները՝ խաչքարի դասիչը, լուսանկարը, գրականության ցանկը, հղում ՀՊՄ հուշարձանների ցանկին:

դ. Կառավարումը՝ լուսանկարների ամսաթիվը, գրանցման ամսաթիվը, լուսանկարչի անունը, տեղաշարժը (թվական, պատճառ, նախկին տեղը), նկարագրության հեղինակը, վերահսկիչի անվանումը և վերահսկման ամսաթիվը:

Մանրամասն նկարագրենք որոշ հատկանիշներ և բերենք մի քանի օրինակ: Ժառանգության կառավարման մեջ անհրաժեշտ է, որ ժամանակի և տարածության մեջ կարողանանք հետևել խաչքարի փոփոխությանը: Քանդակված մակերեսի վիճակը [աղ. 1] կարևոր է, քանի որ զարդաքանդակի կամ արձանագրության ընթեռնելիությունը կախված է վնասվածության աստիճանից: Պատահում է, որ այս տեղեկատվությունը հնարավոր չէ վերծանել: «*Քանդակի վիճակը*» հատկանիշի արժեքը կարող է լինել ենթակայական, երբ խաչքարը մասամբ վնասված է: Հաճախ դա մի քանի գործոնների համակցություն է (օրինակ ՝ սնկապատված և ողողամաշված, կամ մոմապատված և ողողամաշված) [նկ. 7]: «*Դիրք*» [աղ. 2], «*արտաքին վիճակ*» և «*քանդակի վիճակ*» հատկանիշները նշելու են վտանգի տակ գտնվող խաչքարերի ճշգրիտ թիվը: Սա հրատապ կդարձնի ճիշտ գործողությունների դիմել: Այն շենքի (կամ տարածքի) հատակագիծը, որտեղ խաչքարը գտնվում է, կարելի է տիպօրինակներով կառուցել [նկ. 8] և հարմարեցնել տարբեր եկեղեցիների հատակագծերին [նկ. 9; 10]: Մենք նշում ենք այնտեղ խաչքարի համարը, և դա «*տեղ*» հատկանիշի տեսողական լրացումն է: Սա անհրաժեշտ է և բավարար: Այս տեղեկատվությունների հիման վրա կարող ենք խաչքարի համար ստեղծել անձնագիր:

Ի վերջո, եթե խաչքարի հատուկ եզրույթացուցակը կարևոր է, նույնչափ կարևոր է իմանալ և ավելի օգտվել միջազգային չափորոշիչներից (ISO կամ այլ), ինչպիսիք են՝ եզրույթացուցակները, մետատվյալները (*Metadata*), վե-

---

isation des mots. Un discours archéologique doit toujours être associé à une ontologie, fournie en annexe…».

12 Djindjian 2017, 3, 1.10. «*Dans sa généralité, la question de la description n'a pas de solution. Car il n'y a pas une description d'un objet, mais des descriptions de cet objet, en fait autant que d'informations intrinsèques*».

բահսկվող բառապաշարը (*controlled vocabulary*)[13], աշխարհագրական տեղեկատվությունը[14] և ժառանգությունը[15]: Մասնավորապես մեջբերենք *Arches* համակարգում օգտագործված *CIDOC*[16] *Conceptual Reference Model*-ը, որը հիշատակեցինք վերևում՝ ժառանգության կառավարման հարթակների բաժնում:

Տվյալների որակ

Տվյալների որակի կառավարման վերաբերյալ ամերիկացի երկու հեղինակներ իրենց հիմնարար հոդվածում[17] նմանություն են տեսնում ապրանքների որակի և տվյալների որակի միջև: «*Ապրանքի որակը կախված է այն գործընթացից, որով դա ձևավորվում է և արտադրվում: Նմանապես, տվյալների որակը կախված է տվյալների ձևավորման և արտադրության գործընթացներից ներգրավված տվյալների ստեղծման մեջ: Ավելի լավ որակ ձևավորելու համար անհրաժեշտ է նախ հասկանալ, թե ինչ է նշանակում որակ և ինչպես է չափվում*»: Մեկ այլ հոդվածում[18] այլ հեղինակներ առաջարկում են չորս դասակարգ (ներհատուկ, համատեքստային, ներկայացուցչական, հասանելիություն)[19] և տասնհինգ ենթադասերի շարք՝ տվյալների որակը նկարագրելու համար: Պետք է գիտակցել, որ տվյալների որակը այսօր կարևոր բաղադրիչ է մեծաքանակ տվյալների (Big data) և քանակական վերլուծության մեջ: Արդյոք կարո՞ղ ենք խաչքարերի հետ նույն տրամաբանությունը օգտագործել:

ՀՀ կառավարությունը տասնյակ տարիներ ի վեր հաջողել է կառուցել ազգային ժառանգության ցանկ[20]: Ինչ վերաբերում է խաչքարերին՝ որպես դյուրաբեկ, շարժական առարկաներ, ապա այս ցանկը, իր արժանիքներով հանդերձ, անհրաժեշտ է բարելավել և որակը բարձրացնել: Ուստի հետևյալ վեց ենթադասերը անհրաժեշտ և բավարար են իսկական խաչքարացուցակ մշակելու համար:

- Ճշգրտություն (Accuracy), վերաբերում է տեղեկատվության համապատասխանությանը այն իրականության հետ, որը նա պետք է ներկայացնի:
- Ամբողջականություն (Completeness), վերաբերում է այն ծավալին, որի հետ ներկայացված է դիտարկված իրականությունը:

---

13 ISO 25964, Information and documentation - Thesauri and interoperability with other vocabularies.

14 ISO 19115 Geographic information - Metadata.

15 ISO 21127 Information and documentation - A reference ontology for the interchange of cultural heritage information.

16 Conceptual Reference model.

17 Wand, Wang 1996 (November), 87. «*The quality of a product depends on the process by which the product is designed and produced. Likewise, the quality of data depends on the design and production processes involved in generating the data. To design for better quality, it is necessary first to understand what quality means and how it is measured*».

18 Wang, Strong 1996, 20.

19 «*Intrinsic, Contextual, Représentational, Accessibility*».

20 ՀՊՄ հուշարձանների ցանկ 2002–2005:

- Մատչելիություն (Accessibility), չափում է տվյալների առկայությունը կամ դրանց հեշտությունը և ընթերցման արագությունը (օր.՝ լեզվի հետ կապված):
- Հավաստիություն (Believability), գնահատում է, թե արդյոք տվյալները կարո՞ղ են ճշմարիտ համարվել (օրինակ՝ բավարար հղումներով):
- Թարմությունը (Timeliness), չափում է տվյալների ճշգրտությունը՝ ժամանակի բերումով առաջացած փոփոխությունների հետ:
- Հասկանալիությունը (Ease of understanding), ի՞նչ չափով է տեղեկատվությունը հասկանալի:

Բերենք մի քանի օրինակ.

- Մոմիկի խաչքարը այժմ գտնվում է Եղեգնաձորի թանգարանում, բայց ՀՊՄ հուշարձանների ցանկում գրանցված է Ամաղու[21] գյուղի ենթացանկում: Հետևաբար այս տեղեկատվությունը *թարմ* չէ: Ավելին՝ դրա *վիճակը* չի նկարագրված: Հետևաբար կա *ամբողջականության* խնդիր:
- Համեմատելով մեր հավաքածուն ՀՊՄ հուշարձանների ցանկի հետ՝ գտնում ենք որակական և քանակական տարբերություններ: Ինչպե՞ս հստակ ձևով ներկայացնել այս տարբերությունները: «*Պեպցուցիչ-առնչություն*» հատկանիշը [աղ. 3] նշում է, թե արդյոք մեր ցուցակի խաչքարը համապատասխանո՞ւմ է ՀՊՄ հուշարձանների ցանկի խաչքարին: Վայոց ձորի մասնակի հավաքածուի համեմատական գծապատկերը (չհաշված՝ Արտաբույնք բնակավայրը) հետևյալն է [աղ. 4]: Պարզվում է, որ *սպոյգ* խաչքարերի քանակը շատ քիչ է: Այսինքն բացատրության *հասկանալիությունը* ցածր է: Պատճառները բազմաթիվ են՝ բոլորը բխում են նույն աղբյուրից՝ որակի հսկողության բացակայությունից:
- «*Տեղ*» հատկանիշը՝ այսինքն որտեղ է տեղադրված խաչքարը՝ շենքում կամ տարածության մեջ, կարևոր տեղեկատվություն է հետազոտության համար: Դա մեզ թույլ է տալիս իմանալու, արդյոք խաչքարերի տեղադրման կանոն եղե՞լ է եկեղեցիների մեջ, կամ արդյոք, 19-րդ դ. կառուցված եկեղեցիներում նմանատիպ կանոն եղե՞լ է խաչքարերի վերակիրառության ժամանակ:

Ուստի տեսնում ենք, որ ամբողջական աշխատանքի որակը շատ կարևոր է այն երեք նպատակների համար, որոնք նշեցինք հոդվածի սկզբում՝ հնագիտություն, ժառանգության կառավարում և զբոսաշրջություն: Այս ամենը կնպաստի կրթությանը:

[21] Կառավարության որոշում 2003:

Հաշվառում

Սահմանման, ձևայնացման և գործիքների օգնությամբ կարող ենք սկսել հաշվառման գործընթացը: Բայց դաշտային աշխատանքը միշտ տեսությանը չի համապատասխանում և անակնկալների առջև ենք կանգնում: Ահա թե ինչու կրկնվող աշխատելակերպը թույլ է տալիս վերանայել վարկածները և նույնիսկ ձևայնացումը: Իրոք, նույնիսկ եթե խաչքարի սահմանումն անհրաժեշտ է, այն բավարար չէ, քանի որ դաշտային տարածքում նկատում ենք, որ բեկորները շատ են: Ի՞նչ անել այս բեկորների հետ: Պե՞տք է հաշվառենք դրանք: Արդյոք խաչքարի բեկորը խաչքա՞ր է: Այսինքն՝ մասը մի ամբողջությո՞ւն է, թե՞ մաս է կազմում մի ամբողջության: Կարո՞ղ ենք այն հաշվառել որպես մեկ միավոր: Ինչպե՞ս ցուցակագրել այն:

Մենք առաջարկում ենք, որ բեկորը համարվի խաչքար՝ մեկ միավոր ցուցակում: Ավելացնում ենք խաչքարի «*արտաքին վիճակ*» հատկանիշը: Բեկորը վնասված խաչքար է և այն կարող է պարունակել կարևոր տեղեկատվություն (արձանագրություն կամ զարդաքանդակ): Օրինակ՝ Եղեգնաձորի թանգարանում կան 10 միավորներ [նկ. 11], որոնցից մեկը թվագրված բեկորային խաչքար է [նկ. 12]: Ցուցակում խաչքարի վիճակը դառնում է խաչքարի հատկանիշը [աղ. 5]: Վայոց ձորում հայտնաբերված խաչքարերի մասնակի հավաքածուում բեկորների քանակը բավականին քիչ է [աղ. 6]: Այնուամենայնիվ, «*արտաքին վիճակ*» հատկանիշը չի լուծում ամբողջ հարցը: Ի դեպ, բեկորների դեպքում. ինչպես պիտի վարվել խաչքարի «*չափի*» հատկանիշի հետ: Չմոռանանք, որ ուսումնասիրության առարկան խաչքարն է և ոչ թե բեկորը:

Ինչպե՞ս նախնական խաչքարը պատկերացնել և բեկորների չափերից հաշվարկել նրա չափը: Միայն «*լայնության*» պարագայում, այն էլ որոշ դեպքերում է հնարավոր. երբ բեկորը բավականաչափ մեծ է, որպեսզի կարողանանք որոշել խաչքարի լայնության կեսը և առանցքային համաչափությամբ հաշվարկենք նախնական խաչքարի լայնությունը: Այսպիսով, մենք նոր արժեք ենք ավելացնում «*չափի*» հատկանիշին՝ *հաշվված*: Այսինքն «*չափը*» կարող է լինել *ճշգրիտ*, *հաշվված*, *անորոշ*… Ժառանգության կառավարման շրջանակում բեկորները պետք է բծախնդրորեն դիտարկվեն:

Լուսանկարը հաշվառման գործընթացում շատ կարևոր փաստաթուղթ է: Դրա շնորհիվ մենք կարող ենք բարելավել նկարագրությունը և վերլուծել խաչքարը: Ի՞նչ անել, երբ խաչքարը մասամբ թաղված է հողի մեջ, եթե այն մամռապատված է կամ շրջապատված խոտերով: Նման խաչքարի լուսանկարն անօգտագործելի է. անընթեռնելի զարդաքանդակ և արձանագրություն: Հետևաբար դա ցուցակում անտեղի գրառում է: Պե՞տք է մաքրենք խաչքարը կամ հնավայրը: Անկասկա՛ծ, բայց այստեղ իրավաբանական հարցի ենք հանդիպում (թույլտվություն) և տեխնիկական հարցի, որպեսզի խաչքարը չվնասենք:

Վերջապես, չպետք է անտեսենք խմբային աշխատանքը: Փորձը ցույց է տվել, որ չորս հոգուց բաղկացած խումբը, որի յուրաքանչյուր անդամ հատուկ

դեր ունի, բավարար է: Սա նաև համահունչ է նախագծի ճկուն կառավարմանը, ինչպիսին է SCRUM-ը: Չմոռանանք նաև ընդգրկել պատմական հուշարձանների տեղական ներկայացուցիչներին:

Եզրահանգումներ

Հոդվածում փորձ արվեց քննարկել խաչքարերի ցուցակի մշակման հետ կապված ամենակարևոր կետերը: Անհրաժեշտ է խաչքարերի հարցում հստակ քաղաքականություն վարել ժառանգության կառավարման շրջանակում, հակառակ դեպքում որոշ վայրերի խաչքարերը կանհետանան: Հատուկ խաչքարացուցակ կազմելու և տնօրինելու ջանքերը պետք է ուղեկցվեն տեղում գործնական, իրավական գործողություններով: Այսպիսով ցուցակը կդառնա կրթության, հետազոտության, ժառանգության կառավարման և զբոսաշրջության գործիք: Սա հրատապ է, քանի որ եկեղեցիների վիճակը, մասնավորապես 19-րդ դ., նույնիսկ վերանորոգված, որտեղ ժողովուրդը անում է իր ուզածը, տագնապալի է (հակառակ ուղղությամբ ագուցված խաչքարեր, ներկված, մասամբ ջարդված...): Նմանապես, գերեզմանոցներում անիշխանություն է տիրում (հստակ սահմանի բացակայություն, հսկա կամ լքված գերեզմաններ, մաքրության բացակայություն, ոչ մի հարգանք ժառանգության նկատմամբ, ոչ մի սահման հին և նոր գերեզմանների միջև, խաչքարերի տեղահանում և վերակիրառում, սխալ ձևով ամրացում, ոչ լուրջ վերանորոգում...): Այս ամենը սարսափելի տեսարան է առաջացնում: Անզոր խաչքարերը փորձում են դիմադրել այս մշակութային աղետին: Ամեն ինչ ֆինանսական հարց չէ, այստեղ վերաբերմունքի հարց է: Մենք բոլորովին անգիտակից կերպով ենք գործում այս ժառանգության հետ: Պետք է սթափվենք:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՏՀ – աշխարհագրական տեղեկատվական համակարգ
ՀՊՄ – Հայաստանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ
ISO – International Organization for Standardization

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1963
Բարխուդարյան Ս.Գ., Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1963:

ՇԱՀԻՆՅԱՆ 1984
Շահինյան Ա.Ն., Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դարերի խաչքարերը, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1984:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 2008
Պետրոսյան Հ.Լ., Խաչքար, ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, «Փրինթինֆո», 2008:

DJINDJIAN 2017
Djindjian F., L'archéologie - Théorie, méthodes et reconstitutions, Paris, éd. Armand Colin, 2e Ed. 2017.

KHATCHADOURIAN, BASMADJIAN 2014
Khatchadourian H., Basmadjian M., L'art des khatchkars, Les pierres à croix arméniennes d'Ispahan et de Jéruslamem, Paris, éd. Geuthner, 2014.

SCHWABER, SUTHERLAND 2017
Schwaber K. and Sutherland, J., The Scrum Guide™, 2017 www.scrum.org

WAND, WANG 1996
Wand Y., Wang R. Y., "Anchoring Data Quality Dimensions in Ontological Foundations", November 1996, Vol. 39, No. 11 Communications of the ACM, 87.

WANG, STRONG 1996
Wang R. Y., Strong D. M., Beyond Accuracy: What Data Quality Means to Data Consumers Journal of Management Information Systems, Vol. 12, No. 4, 1996, 20.

Համացանցային աղբյուրներ

ARCHES
Arches, An open source data management platform for the heritage field, https://www.archesproject.org/ , դիտում՝ 31-03-2023

CONCEPTUAL REFERENCE MODEL
CIDOC Conceptual Reference Model, http://www.cidoc-crm.org/, դիտում՝ 31-03-2023

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ 2003
ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ Վայոց ձորի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պատմական ցուցակը հաստատելու մասին, 17 հունիսի 2003, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=38081, Համարանիշ 11.8.1/1.1.4

ՀՊՄ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ 2002–2005
https://hy.wikipedia.org/wiki/Հայաստանի_պատմության_և_մշակույթի_անշարժ_հուշարձանների_ցանկ, դիտում՝ 31-03-2023:

Միջազգային չափորոշիչներ (ISO. International Organization for Standardization)
ISO 25964, Information and documentation — Thesauri and interoperability with other vocabularies
ISO 19115 Geographic information — Metadata —
ISO 21127 Information and documentation — A reference ontology for the interchange of cultural heritage information

Նկ. 1.Թելանման փորագրված խաչի իրաններ

Նկ. 2.Խաչազարդաքանդակներ

Նկ. 3. Վայոց ձորի խաչքարերի մասնակի քարտեզ – կետային

Նկ. 4.Վայոց ձորի խաչքարերի մասնակի քարտեզ – խմբված

Նկ. 5.Վայոց ձորի թվագրված խաչքարերի (մասնակի հավաքածու) լայնությունն ըստ ժամանակի

Նկ. 6. Կոտայքի թվագրված խաչքարերի (մասնակի հավաքածու) լայնությունն ըստ ժամանակի

Նկ. 7.Վայոց ձորում (Եղեգիս) մոմապատված և ողողամաշված խաչքար



Նկ. 8. Խաչքարերի տեղադրության համար ստեղծված վանդակահենք



Նկ. 9. Վանդակահենքի կիրառումը՝ բազիլիկաձև եկեղեցու համար



Նկ. 10. Վանդակահենքի կիրառումը՝ քառախորան եկեղեցու համար

Նկ. 11. Եղեգնաձորի բեկորային խաչքարերի բաշխումը ու քանակը (մասնակի քարտեզ)

Նկ. 12. Եղեգնաձորի բեկորային թվագրված խաչքար (այժմ երկրագիտական թանգարանում)

Քանդանկի վիճակը	Ժողովրդի վերաբերմունք կամ բնական երևույթ
Պարզ	Ոչ մի ազերում
Ծեփված	Միտումնավոր՝ կրով կամ գաջով
Ներկված	Միտումնավոր՝ սպիտակ, կարմիր...
Մոմապատված	Սովորություն
Մամռապատված	Բնական ազերում
Հարթացված	Սովորություն կամ միտումնավոր (ողորկված, կոկված երբեմն հայելու նման)
Ողողամաշված	Բնական ազերում
Սրոցված	Միտումնավոր
Ցնչված	Միտումնավոր (վերացված, եղծված)

Աղ. 1. Խաչքարերի քանդակի վիճակի նկարագրության ցուցիչը



Աղ. 2.Վայոց ձորի խաչքարերի քանակը (մասնակի հավաքածու) ըստ դիրքի

ՊետՑուցիչի-առնչություն	Բացատրություն
Անորոշ	Երբ մենք չենք կարող մեր խաչքարը նմանեցնել պետական ցանկի խաչքարին, քանի որ նախարարության ցանկում չկա խաչքարի հետ կապված որևէ տեղեկատվություն կամ լուսանկար. Մենք չենք կարող ենթադրություն անել:
Անստույգ	Երբ մենք կարող ենք մեր խաչքարը նմանեցնել պետական ցանկի խաչքարին, քանի որ տեղեկություններ կան (վիճակը, քանակը, տեղը և այլն), բայց պետական ցանկում խաչքարի հետ կապված ոչ մի լուսանկար չկա. Մենք ենթադրություն ենք անում:
Ոչ գոյանշված	Երբ մեր խաչքարը պետական ցանկում չէ (օրինակ ոչ մեկ գոյանշված խաչքար հնավայրում կամ հնավայրը նախարարության ցանկում նշված չէ)
Ստույգ	Երբ մեր խաչքարը նշված է պետական ցանկում՝ այնտեղ կա լուսանկարը կամ թվականը:

Աղ. 3. Մեր ցուցակի ու պետական ցուցակի համեմատության չափանիշը



Աղ. 4.Վայոց ձորի մեր ցուցակի խաչքարերի համեմատությունը պետական ցուցակի հետ

Վիճակ	Բացատրություն
Ամբողջական	Խաչքարը = 100%
Պակասավոր	50% < Խաչքարը < 100%
Բեկորային	Խաչքարը = 1 Բեկոր ≤ 50%
Կոտրտված	Խաչքարը = 100%, N Բեկոր, «կպած»
Կոտրտված-Պակասավոր	Խաչքարը = Կոտրտված և < 100%
Մասնատված	Խաչքարը = 100%, N Բեկոր, «անջատված»
Մասնատված-Պակասավոր	Խաչքարը = Մասնատված և < 100%
Անորոշ	Եթե Խաչքարը թաղված է և փորելը անհնարին է, հաշվառման ժամանակ

Աղ. 5. Խաչքարերի վիճակի նկարագրության ցուցիչը



Աղ. 6.Վայոց ձորի խաչքարերի քանակը (մասնակի հավաքածու) ըստ վիճակի

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Անանյան Հայարփի Գուրգենի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արխիվի և արխիվի մշակման գ/հ խմբի ավագ լաբորանտ
ananyanhg@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Գաբրիելյան Արմինե Արարատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի գիտաշխատող
arminegabriel.iae@gmail.com

Դանիելյան Հենրիկ Ավագի
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտաշխատող
henrikh.danielyan@gmail.com

Խաչատուրեան Յարութիւն Բիւզանդի
Ճարտարագետ, անկախ հետազոտող, Փարիզ
ha.khatchadourian@free.fr

Հակոբյան Սմբատ Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գիտաշխատող
smbat.hakobian@gmail.com

Հարությունյան Արսեն Էդուարդի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վիմագրագիտության բաժնի վարիչ / Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող
ars.vimagraget@gmail.com

Մալոյան Արման Մանուկի
պատմական գիտությունների թեկնածու
«ԿԶՆԱԿ» հիմնադրամի՝ վերապատրաստման ծրագրերի, մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ
armanmaloyan@mail.ru

Մատիկյան Հասմիկ Համլետի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող / Շիրակի պետական համալսարանի դասախոս
hasvrej@mail.ru

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Միրիջանյան Դիաննա Հրաչյայի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող
dianamirijanyan@gmail.com

Մկրտչյան Լևոն Ալբերտի
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող / «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահապանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ
levoncultur@gmail.com

Շամամյան Նարինե Ալբերտի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազագրության ինստիտուտի Ազգագրության բաժնի գիտաշխատող
dancenano@mail.ru

Ռամազյան Սամվել Մարտունի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
sramaz@mail.com

Սարիբեկյան Մարիամ Գրիգորի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող / Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահ
mariamgsaribekyan@gmail.com

Վարդանյան Բենիկ Վարդանի
Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող
vbenik@yahoo.com

Վարդանյան Նվարդ Խաչատուրի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի ավագ գիտաշխատող / Երևանի պետական համալսարանի դոցենտ
nvardv@yahoo.com

Փալանջյան Ռուզան Սուրենի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող
ruzanpal@gmail.com

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5

Սրբագրիչ՝ Անժելա Ամիրխանյան
Ռուսերենի և անգլերենի սրբագրիչ՝ Դիանա Ջարդարյան
Ձևավորում և էջադրում՝ Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Հովսեփյան» ՍՊԸ տպարանում
հեռ. 043 107 090
hovsepyanprint@gmail.com

ՀԱԻԱ 5